Արձանագրության 3

Երևան քաղաքի Շենգավիթ, Նոր Նորք, Դավթաշեն և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների փողոցների եզրաքարերի վերանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԲՄԾՁԲ-19/31 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

08.05.2019թ.
Ժամը՝ 10:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Տ. Իգիթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի.

- ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ն և Գրանտշին ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն,
- Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված շեմը /գերազանցում է մասնակցի գնային առաջարկի մեկ տոկոսը/:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի՝ Վահրամ Կնյազյան Ա/Ձ-ի հայտը՝ համաձայն Կարգի 44-րդ կետի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Վահրամ Կնյազյան	Անբավարար
Գրանտշին ՍՊԸ	Բավարար
ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. Ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակցի մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին և 2-րդ կետերով ընդունած որոշումները՝ հանձնաժողովը որոշեց ընթացակարգի.

3-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն ՓԲԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Էյ Վի Էն Գրուպ ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Տ. Իգիթյան)

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 4-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 10:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան